

տուրական համարուելու, Հայը դարերից ի վեր արշինը գերադասել է դաշոյնից և կարծել է թէ քրիստոնութիւնը պահանջում է ոչխարային հեզութիւն և խեղճութիւն: Հայը հռանդուն է փող վաստակելում և խնայողութեան մէջ: Թուրքը վերջին կոպէկը չի խնայում զէնքի համար: Հայը կարծում է, թէ զէնքը մեռած կապիտալ է. աւելի լաւ է, նրան տուած փողով խանութի ապրանքը աւելացնել և մի քիչ էլ խաբել մուշտարիներին:

Թէ Թուրքը դեռ անտաշ է մնացել հարիւր տարի ոռոսաց խաղաղ բաղաբականութեան հովանաւորութիւնը վայելելուց յետոյ էլ և, երևի դեռ շատ երկար ժամանակ կը մնայ, այս, աւելի քան երբեք, ապացուցուեց Նախիջևանի ղէպքերով: Լրագրների թղթակիցները այնպիսի մանրամասնութիւններ են հաղորդում կոտորածից, որ մարդ ապշում է և հարցնում իրան, արդեօք, գրանք իսկապէս մարդիկ են, թէ միայն ընտելեան կծու ծաղրով են մարդկային կերպարանք ստացել: Զահուկ գիւղում Մկրտիչ Յովհաննիսեանին այրել են իւր կնոջ առջև: Հայ գիւղում մի ծնողի մորթել են դեռահաս դաւաճների աչքերի առջև և այրել են մի քանի երեխաներ: Թուրքը չի զգացում ոչ կանանց յուսահատ աղաղակներից, ոչ երեխաների աղիողորմ ճչերից: Նա ծծկերին խլում է մօր կրծքից և ցցում սուրի ծայրի վրայ, ծերին և անդամաւործին գնդակահար անում, կանանց արգանդը պատռում է դաշոյնի ծայրով և անծինին դուրս ձգում: Նախիջևանում սպանում են մի մանկան հօրն ու եղբօրը: Մանուկը բազարում բռնում է Նախիջևանի խանի փէշերը և հեծկտանքով փրկութիւն աղերսում, մի Թուրք խփում է և մանկանը սպանում: Այս արդէն գազանութիւն էլ չէ: Այս մի տեսակ այլասեռումն է: Միայն ընտելեանից պատժուած մի ցեղ կարող է այդչափ հրէշանալ: Միայն վախկոտ, ստոր և քառ փորսողները կարող են այս տեսակ սպանութիւններ գործել:

Այլևս կասկածելի չէ, որ Թուրքերի ներկայ շարժումը Անդրկովկասում համիսլամութեան գաղափարի առաջին ծաղիկն է: Բոլոր ոչ մահմեդական ակնաստեանները միաբերան վկայում են, որ Թուրք խուժանը Նախիջևանում և գիւղերում յարձակումների ժամանակ ունեցել է կրօնական դրօշակ և Ալլիի ձեռքը: Շատերը յարձակողներից հագած են եղել սպիտակ շապիկ կարմիր թևերով և գլուխներին ունեցել են տաճկական կարմիր ֆէսեր: Կարմիր ֆէսը համիսլամական գաղափարի էմբլէմներից մէկն է:

Առ այժմ նկատելի է մի բան, որ թուրքերը չափազանց շփոթուած են: Նրանք կարծում էին, որ կարելի է յանուն մի գաղափարի կռիւ վարել, մարդիկ կոտորել, երկիր թալանել և այդ գաղափարը մինչև վերջը թագցնել: Այս չեղաւ: Կովկասի մամուլը, իսկ այժմ նաև մայրաքաղաքինը, քանի գնում, այնքան պարզ և որոշ են խօսում համիսլամութեան մասին: Փաստերը քանի գնում շատանում են, և կառավարութիւնը ուշադրութիւնը լարել է: Կասկած չը կայ, որ այսուհետև նա թուրքերի այժմեան շարժմանը կը նայի աւելի լուրջ աչքով և պատահուճներին չի վերագրել այն:

Մենք հաւատացած ենք, որ համիսլամութեան գաղափարը առանձին ժողովրդականութիւն չի վայելում Կովկասի մահմեդականների մէջ: Նրանք չեն կարող համակրել մի գաղափարի, որի իրագործումը աւելի քան կասկածելի է և աւելի քան վտանգաւոր նախ և առաջ հէնց մեր երկրի մահմեդականների համար: Թուրք ժողովուրդը մոլորուած է միայն: Մի խումբ ցնորամիտ «խնտեւլիգներ» թուրքեր են, որ մոլորեցնում են նրան: Այդ «խնտեւլիգներ» կոչուածները երևակայում են օդի մէջ կառուցանել ամրոցներ, որ նոյն իսկ կառուցանողների գլխին պիտի խորտակուին վերջի ի վերջոյ: Նրանք շեղում են իրանց ժողովուրդը խաղաղ կենցաղավարութեան ուղիղ շաղից և անգիտակցաբար տանում են նրան դէպի կորուստ: Նրանք չը գիտեն դեռ ինչ է ասել ոռոս կառավարութիւն: Պետութեան ժամանակաւոր լուծիւնը համարում են խրախուսման նշան: Նրանք կարծում են, թէ կարելի է Ռուսիայի հետ ամեն խաղ խաղալ: Ռուսիայի Հեռաւոր Արևելքում ունեցած անաշտղութիւնները կուրացրել են նրանց և չը գիտեն, որ առիժը թէև վիրաւորուած է, բայց դեռ զօրեղ է, որ նա մի օր իւր զբաղումը հայեացքը Հեռաւոր Արևելքից կը դարձնի դէպի Մօտաւոր Արևելք և այն ժամանակ վայ համիսլամութեանը Կովկասի սահմաններում:

Ի պատիւ Պարսկաստանի, պիտի ասած, որ նա համակրութիւն ցոյց չի տալիս համիսլամութեան գաղափարին: Անշուշտ նա զգում է որ տաճկական սօֆթանների և Կովկասեան մի խումբ թուրք դիպլոմատներին հիւանդ երևակայութիւնը չի կարող բացի շնասից մի բան տալ իսլամի դրօշին: Վեհափառ Շահը, որի խոհմութիւնը վաղուց է փաստաբանուած, ներոպա գնալուց առաջ խստիւ պատուիրել է իւր հպատակներին ոչ մի խռովութիւն չը սկսել քրիստոնեաների դէմ: Նա հրամայել է վարչական անձանց անողորմ պատժի ենթարկել

ամենքին անխտիր, որոնք կը յանդգնին երկրի խաղաղութիւնը խանգարել: Նորին Մեծութիւնը անկեղծ վշտացած է իւր կրօնակիցները շարժումից Կովկասում: Այնչափ վշտացած, որ Կովկասի վրայով Եւրոպա անցնելով, այս անգամ, հակառակ իւր սովորութեան, Բագու չը մտաւ: Աղդարեւ, թնչ սրտով պիտի տեսնէր թուրք առաջաւորներին, որ անշուշտ պիտի նրա առաջը ելնէին ազ ու հացով, թնչ սրտով պիտի անցնէր նա այն փողոցներով: Ուր մի քանի ամիս առաջ թափուեց անմեղ մանուկները և անզօր կանանց արիւնը: Այսչափ վայելուչ և քաղաքավարի կարող է լինել միայն մի լուսաւոր և ջննտլմեն պետ, որպիսին է իսկապէս Մուզաֆֆէ-է-Էդդինը:

Թուրքերը մի յանցաւոր հարուած տուին Կովկասի խաղաղ կուլտուրական յառաջադիմութեան և յետաձգեցին այն շատ տարիներով: Այս է ահա ամենացաւալին, այս է, որ ամօթ է բերում նրանց: Առանց այն ևս Ռուսիայում և Եւրոպայում մեծ կարծիքի չէին Կովկասի մասին: Մեզ համարում էին վայրենիներ, թուրքերը ապացուցեցին, որ իրաւ մեր երկրի բնակչութիւնը կիսով չափ վայրենիներից է բաղկացած:

Թուրքերը այժմ կաշուից դուրս են գալիս հաւատացնելու ում հարկն է, թէ իրանք Ռուսիայի հաւատարիմ հպատակներ են: Այս շատ հասկանալի է: Մի կողմից համիւլամութեան դրօշի տակ ինտրիգներ լարելով կառավարութեան դէմ, միւս կողմից ուղում է շոյած լինել նրան: Եւ ճիշտ են անում համիւլամութեան դուրս ցցուած ճիրանները առ այժմ թագցնել: Այս, ի հարկէ, նրանց չի յաջողուի, Ռուսիայի անկեղծ բարեկամները չեն զլանալ պատուել նրանց դիմակը վերջնապէս և ցոյց տալ, որ Անդիշանի ապստամբութիւնը մի թեթև նախերգանք է այժմեան շարժման, իսկ այժմեան շարժումը տրագիկօմեդիայի առաջին գործողութեան առաջին տեսիլն է թէև անմշակ:

Թուրքեր մատի փաթաթան են դարձրել հայ յեղափոխական կազմակերպութիւնները և դրանով են ուղում ընկճել հայերին: Բայց ապացուցանելու կարիք չունի այն, որ հայ յեղափոխութիւնը երբէք ուղղուած չի եղել Ռուսիայի դէմ: Նա նոյն իսկ Տաճիկ պետութեան դէմ չի զինուած, այլ միայն այդ պետութեան փթած ուժիմի դէմ: Նա ոչինչ թշնամական զգացում չունի դէպի տաճիկ ժողովուրդը: Իսկ Ռուսիայի վերաբերմամբ նա միշտ եղել է կօրրեկաւ:

Հայն երբէք զէնք չի բարձրացրել ոռւս զինուորի դէմ

և չի էլ բարձրացնիլ այսուհետև։ Նա ուսուսուսի բարեկամն է և անկեղծ պաշտպանը — այս նա ապացուցել է շատ անգամ։ Իսկ թուրք ամբոխն այժմ կուռւմ է ուսուսուսուս զօրքերի դէմ Երևանի նահանգում։ Ահա ինչու՞ն է տարբերութիւնը։ Կարծում ենք, որ միայն այս տարբերութիւնը բաւական է երկու ազգութիւնների իսկական պատկերը լուսաբանելու համար։ Եւ ոչ մի սուտ, լուսանք ու զրպարտութիւն չի կարող իրութիւնը թաքցնել Ռուս Պետութիւնից...

ՄԿՐՏԻՉ ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ կաթողիկոս ամենայն Հայոց Ժայրագոյն Պատրիարք Համագգական Մախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի Գերագնիւ պ. Կարապետի Կոստանեան, Տեսչի Հոգեւոր Ճեմարանի Մայր Աթոռոյս և հարազատի սորին Հայրապետական օրհնութեամբ յայտ առնեմք։

Բազմաժամանակեայն Ձեր վաստակը և ծառայութիւնը՝ մատուցեալը ազգիս ի կրթական ասպարիզի, ապաքէն թողեալ են զգալի օգուտս եկեղեցւոյ մերոյ և ուսումնարանաց, մանաւանդ ի գլխաւոր կրթարանս մեր, այն է ի Հոգեւոր ճեմարանի Մայր Վանուցս, ի Ներսիսեան Հոգեւոր Դպրանոցի, ի տարեգիրս որոց մնայ անշնչելի անուն և վաստակ պ. Կ. Կոստանեանց, իբրև ուսուցչի, պաշտօնակատարի տեսչի և իբրև լիազօր տեսչի և որոց արժանաւորապէս և գիտակցաբար պաշտօնավարութեանն մեք աներկբայ զմեզ կացուցանեմք։

Յիրաւի ծանր է մեզ և զրկանք Հոգեւոր Ճեմարանի զրկիլ ի հմուտ ղեկավարէ մեծի հաստատութեանն այնորիկ, ուրանօր խաղաղ և անվրդով հոլովէին շրջանք ուսումնարանական ամաց, միաբան սիրով եւ համերաշխութեամբ ուսուցչաց և պաշտօնէից ընդ գլխաւորութեամբ Ձեր և ցանկալի իսկ էր, զի ըստ առաջնոյն կայիք մնայիք ի Ձերումդ պաշտաման, սակայն զիջեալ ի խնդիր Ձեր ի Թախանձանս, որ խնդրէք ազատ զՁեզ կացուցանել ի սիրեցեալն Ձեր ասպարիզէ, Մեք զիջեալ ի խնդիր Ձեր ցաւ ի սիրտ ընդունիմք զհրաժարեական Ձեր և ազատ համարիմք ի պաշտամանէ տեսչութեան Հոգեւոր Ճեմարանի Մայր Աթոռոյս։ Արդ՝ որ հեռանայք ի սրբավայրէս եւ բաժանիք ի Մէնջ, ընկալարուք զսրտագինն մեր շնորհալիս հանդերձ գոհունակութեամբ ի տրիտուր արդար վաստակոց Ձերոց, արդիւնաւոր ջանիցն եւ հմուտ կառավարութեանն։

Փրկիչն Յիսուս, որ պարգևատուն է և վարձատրիչն